

## Ցանքի ժամկետները

Հայտնի է, որ գարնանացան հացահատիկային և կերային մշակաբույսերի ցանքը ժամանակին ու սեղմ ժամկետում կատարելը հնարավորություն է տալիս մեծ չափով բարձրացնելու բույսերի բերքատվությունը:

**Ճիշտ ժամանակին կատարված ցանքի դեպքում**, համապատասխան ջերմության առկայությամբ, հատիկն արագ կերպով ջուր է կլանում, ուռչում և 5-7 օրվա ընթացքում ծիլերը հողի երես են դուրս գալիս:

**Ժամկետից շատ վաղ ցանքի դեպքում** սերմերը ընկնում են ցուրտ և գերխոնավ հողի մեջ, որոշ ժամանակ չեն ծլում, որի հետևանքով նրանց մի մասը ոչնչանում է, իսկ մյուս մասն էլ տալիս է թույլ և պակաս կենսունակություն ունեցող ծիլեր:

**Ցանքը ուշացնելու դեպքում**, հողի խոնավության զգալի մասը գոլորշիանում է և հատիկի ջուր կլանելու ու ծլելու համար աննպաստ պայմաններ են ստեղծվում, որը բացասաբար է անդրադառնում բույսերի դաշտային ծլունակության, թփակալման, բույսերի բարձրության, հասկի երկարության, յուրաքանչյուր հասկում հատիկների քանակի, սերմի բացարձակ քաշի և այլ որակական հատկանիշների, ինչպես նաև բերքատվության վրա:

Երկրագնդի գլոբալ տաքացման հետևանքով հնարավոր է կլիմայի անսովոր փոփոխություններ, որոնք անակնկալներ կարող են մատուցել գյուղացիական տնտեսություններին: Անձրևների և ձյան առավել մեծ քանակը տարվա ձմեռային սեզոնին կրերի հողի խոնավացման մեծացմանը, սակայն ավելի բարձր



ջերմաստիճանները կարող են ամառային սեզոնին հողի խոնավության կորստի պատճառ հանդիսանալ: Հողի խոնավության մակարդակի փոփոխությունները, անկասկած, շատ կարևոր են գյուղատնտեսության համար:

Ուստի անհրաժեշտ է ճիշտ գնահատել ցանքի ժամանակը, լինել պատրաստ ցանքը սեղմ ժամկետում կատարելու համար, քանի, որ հողի նախացանքային, ըստ ագրոտեխնիկական կանոնների ժամանակին նախապատրաստումը, ցանվող հատիկի համար լավագույն պայմանների ստեղծումը, ցանքի խորության և ցանքի նորմայի ճիշտ պահպանումը, նախորոք ձեռք բերված առաջին և երկրորդ դասի սերմերով ցանքի կատարումը, բարձր բերքի գրավականն է:

Այսպիսով՝ եզրակացվում է, որ գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության յուրաքանչյուր գործոնի կիրառման ժամկետների խախտումը տանում է բերքատվության անկման, ուստի ժամանակն է, որ հենց սկզբից պահպանվեն բույսերի մշակության սահմանված տեխնոլոգիաները և դրվեն բարձր բերքի հիմքերը: